



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


սրտմենել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով  
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

79



ԾՐԱԳԻՐ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



Կ. ՊՈՒԻՍ



1922



# ԾՐԱԳԻՐ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

1922

*Կարև*  
116

1933

UNIVERSITY OF CALIFORNIA

LIBRARY

1933

1933

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Ռամկավար Ազատական Կուսակցութեան ծրագիրը հասարակութեան ներկայացնելու առիթով կ'ուզենք մէկ քանի բառերու մէջ խտացնել ռամկավարական կարգուսարքերու եւ ժողովուրդի վեհապետութեան ըմբռնումին վրայ հիմնուած այս Կուսակցութեան աշխարհահայեացքն ու ուղղութիւնը:

Ազգին անհատականութիւնն ու անոր օրինաւոր շահերն ու իրաւունքները պաշտպանելու ձգտումը՝ ուրիշ ժողովուրդներու իրաւունքներուն եւ շահերուն հանդէպ տածուած յարգանքին հետ կը բնորոշեն այս կուսակցութեան ազգայնականութիւնը:

Ազատականութեան մէջ կ'ըմբռնուին անհատներու եւ հաւաքականութիւններու Ֆիզիքական, մտաւորական եւ բարոյական կարողութիւններու ազատ կիրարկման իրաւունքն ու հայ հայրենիքի քաղաքական եւ տնտեսական պայմաններուն պատշաճող եւ անոնց մղում տուող ամէն տեսակ նոր եւ յառաջդիմական գաղափարներ որդեգրելու պատրաստակամութիւնը:

Քաղաքական, տնտեսական ու ընկերային բարեփոխութիւնները՝ բարեշրջման (évolution) եղանակով:

3 4 5 6 7 8 9

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 20 horizontal lines. A dark, irregular ink blot is present on the right side of the page, overlapping the text in the middle section.

# ԾՐԱԳԻՐ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

---

## ՆՊԱՏԱԿ

Ռամկավար Ազատական Կուսակցութեան նպատակն է՝ ապահովել և պահպանել Միացեալ Հայաստանի անկախութիւնը, պաշտպանել Հայ Ազգին քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական-մշակութային շահերը, ու աշխատիլ անոնց բարգաւաճման :

---

## ԳԼՈՒԽ Ա.

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Յօդուած 1.— Կուսակցութիւնը հիմնուած է ժողովրդային լեհապետութեան և քաղաքացիական հաւատար իրաւունքներու սկզբունքին վրայ և չի ճանչնար դասակարգային սեւէ խտրութիւն :

Յօդ. 2.— Հայաստանի կառավարութեան ձեւ կ'ընդունուի Ռամկավարական Հանրապետութիւնը, Օրէնսդրական, Դատարանական և Գործադիր Իշխանութեանց բաժանումներով :

---



## Գ Լ ՈՒՒ Բ.

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 1.— Հայաստանի ամէն քաղաքացի  
բացարձակապէս հաւասար է օրէնքի առջև :

Յօդ. 2.— Հայաստանի ամէն քաղաքացի  
կը վայելէ քուէարկութեան հաւասար իրա-  
ւունք սահմանադրութեամբ որոշուած տա-  
րիքէն սկսեալ, առանց սեռի խտրութեան :

Յօդ. 3.— Ներկայացուցչական բոլոր  
մարմիններու ընտրութիւնը կը կատարուի  
ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի  
քուէարկութեամբ :

Յօդ. 4.— Չինուորական կրթութիւնը  
պարտաւորիչ է Հայաստանի բոլոր արու բը-  
նակչութեան համար, ինչպէս նաև, ի հար-  
կին, զինուորական հաւասար ծառայու-  
թիւնը :

Յօդ. 5.— Բանակը քաղաքականութիւ-  
նով չի զբաղիր, որով կ'արգիլուին այդ նը-  
պասակով բրօքականան և անոր վրայ փոր-  
ձուած ազդեցութիւնները : Առգաղ ժամա-  
նակներու մէջ միայն, խորհրդարանի մաս-  
նաւոր քուէով, զինուորը ազատ կը թողուի  
գործադրելու իր քաղաքացիական իրաւուն-  
քը, մինչ պատերազմի և ուրիշ անբնականոն  
ժամանակներու մէջ, անոր այդ իրաւունքը  
առկախուած է :

Յօդ. 6.— Հայերէնը պետական պաշտօ-  
նական լեզուն է :

Յօդ. 7.—Նախակրթութիւնը ընդհանուր, ձրի և պարտաւորիչ է: Երկրորդական և հասարակական կրթութեան համար՝ պետութեան կողմէ կը հայթայթուին դիւրութիւններ ընդունակ աշակերտներուն:

Յօդ. 8.— Ազատութիւն խօսքի, մամուլի, խնդրագրի (petition), հանրագրութեան, հաւաքումներու, ընկերակցութեան և ճամբորդութեան:

Յօդ. 9.— Ազատութիւն խղճի, կրօնքի և պաշտամունքի:

Յօդ. 10.— Անձեռնմխելիութիւն անձի, անբռնարարութիւն ընակարանի, ստացուածքի և նամակի:

Յօդ. 11.— Հրապարակային դատաւարութիւն և երդուեալ դատաւորներու դրութիւն:

Յօդ. 12.— Վարչական ապակեդրոնացում՝ պետութեան հիմնական օրէնքներուն համաձայն:

## Գ Լ ՈՒ Խ Գ.

### ԸՆԿԵՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Յօդ. 1.— Հրատարակում օրէնքներու, որ կ'ընծային զարգացման հաւասար պատեհութիւն բոլոր քաղաքացիներուն և կ'ապահովեն արդարութեան գործադրութիւնը պետութեան ընկերա-տնտեսական կեանքին մէջ:

Յօդ. 2.— Հիմնարկութիւն պետական

դրամատուններու՝ ընծայելու համար . դիւրամատաչելի վարկ քաղաքացիներուն :

Յօդ. 3.— Կանոնաւորում օրէնսդրական միջոցներով՝ աշխատութեան և դրամագլուխի փոխադարձ յարաբերութիւններուն :

Յօդ. 4.— Արդար և համերաշխ գործակցութիւն և շահակցութիւն դրամագլուխի և աշխատութեան միջեւ , հաշտարար ատեաններու միջոցաւ :

Յօդ. 5.— Պետական վերհսկողութիւն աշխատանքի ժամերու , վարձատրութեան չափի և գործավայրերու առողջապահական պայմաններու :

Կանոնց և անչափահասներու աշխատութեան պայմաններու մասին մասնաւոր օրէնսդրութիւն :

Յօդ. 6.— Հաստատում պետական գրասենեակներու (պիւրօ)՝ իրրեւ միջնորդ գործատիրոջ և գործաւորի միջեւ , անգործներուն աշխատանք հայթայթելու համար :

Յօդ. 7.— Պետական ապահովագրութիւն՝ պաշտպանելու համար ամէն կարգի աշխատաւորներ՝ ընդդէմ անգործութեան , հիւանդութեան , արկածի , ծերութեան և մահուան :

Պետական ապահովագրութիւն նաեւ ընդդէմ բնական պատահարներու , ինչպէս՝ երաշտ , հեղեղ , կարկուտ , եւն . :

Յօդ. 8.— Օրէնսդրական մասնաւոր միջոցներով քաջալերել և պաշտպանել երկրագործութիւնը և ատենին ճարտարարուեստը :

Յօդ. 9.— Պետութեան կը պատկանի հանքերու, անտառներու, ջուրերու և ուրիշ բնական հարստութիւններու արդիւնագործումը :

Կառավարութիւնը կրնայ՝ իր վերհսկողութեան տակ՝ անոնց շահագործումը տալ անհատներու կամ ընկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար :

Յօդ. 10.— Պետականացում թղթատարութեան, հեռագրի, հեռախօսի և երկաթուղիներու :

Կառավարութիւնը կրնայ՝ իր վերհսկողութեան տակ՝ երկաթուղիներու, հեռագրի և հեռախօսի մեծաշնորհը տալ անհատներու կամ ընկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար :

Յօդ. 11.— Քաղաքապետութեան կը պատկանի հանրակառքերու, լոյսի ու ջուրի մատակարարութիւնը :

Քաղաքապետութիւնը կրնայ անոնց մեծաշնորհը տալ անհատներու կամ ընկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար :

Յօդ. 12.— Քաջալերում գործակցական (coopérative) ընկերակցութիւններու կազմակերպումին և ծաւարման :

Յօդ. 13.— Պետական հասոյթի հայթայթում՝ սուրբի արդար բաշխումով, արտոյի ջլատումին տնտեսական ու ընկերակցական ձեռներկցութիւնը և երկրին արդիւնտրական և առեւտրական գործունէութիւնը :

Յօդ. 14.— Յառաջատուական սուրբ

եկամուտի և ժառանգութեան վրայ, իսկ համեմատական միօրինակ տուրք՝ հողի և կալուածի արժէքին վրայ:

Յօդ. 15.— Աստիճանական ջնջում անուղղակի տուրքերու:

## Գ Լ ՈՒ Խ Դ.

### Հ Ո Ղ Ա Յ Ի Ն Հ Ա Ր Ց

Յօդուած 1.— Կուսակցութիւնը կը ճանչնայ հողային սեփականութեան իրաւունքը:

Յօդ. 2.— Հողին անհատական սեփականատիրութիւնը կը սահմանաւորուի խորհրդարանին կողմէ քուէարկուած հողային օրէնքներու համաձայն:

Յօդ. 3.— Սեփականատիրութեան ընդհանուր պայմանն է հողին մշակութիւնը և արդիւնագործումը:

Ներկայ հողային սեփականատիրութեանց իրաւունքները կը ճշդուին այս սկզբունքին կիրառութեամբը:

Յօդ. 4.— Հողագուրկ և սակաւահող դիւղացիներու ձրիարար հող կը տրուի պետական տնօրինութեամբ, հողային ընդհանուր օրէնքի համաձայն:

Յօդ. 5.— Հողին բաշխման չափանիշը (նօրմա) կ'որոշուի տեղական պայմաններու, հողին սրակին և աշխատութեան չափին համեմատ:

Յօդ. 6.— Պետութիւնը իրաւունք ունի գրաւելու անհասանելի և ընկերութիւններու սեփական հողերը, երբ անոնք օրէնքով սահմանուած չափանիշէն աւելի են, նաեւ այն հողերը և անշարժ ստացուածքները, որոնք անհրաժեշտ են հանրօգուտ նպատակներու համար, խարդար հատուցում ընելով անոնց տէրերուն :

Յօդ. 7.— Գրաւման ենթակայ չեն՝

Ա. Այն հողերը, որոնք թէեւ չափանիշէն աւելի, բայց կը ծառային հանրային, մշակութային և բարեգործական հաստատութեանց պահպանման :


Բ. Այն հողերը, որոնք իբր պարտէզ, այգի, մրգաստան, փորձադաշտ, բուժարան են, իրենց վրայ կը կրեն մասնաւոր աշխատանքի և դրամադրուիի արդիւնքը :

Գ. Գործարաններու և այլ ճարտարարուեստական հիմնարկութիւններու պատկանող հողերը, որոնք անհրաժեշտ են անոնց գործածութեան համար :

Յօդ. 8.— Ընդհանուր հայ ժողովուրդին նուիրարիութեամբը գոյացած վանքերու և եկեղեցիներու սեփական հողային ստացուածքները ենթակայ չեն գրաւման : Պետութիւնը կը հսկէ սակայն անոնց արդիւնաւոր և նպատակայարմար գործածութեան վրայ :

Յօդ. 9.— Գիւղերու համար սահմանել հասարակաց գործածութեան յատուկ արօտատեղիներ և անտառներ, և ապահովել անոնց անձեռնմխելութիւնը :

Handwritten notes in blue ink: "Երկր" (written vertically) and "115" (written horizontally).



Յօդ. 10.— Հողային օրէնքները կը գործադրուին աստիճանաբար, բնակչութեան թիւին, մշակման պահանջներուն և տեղական պայմաններուն համեմատ :

## Գ Լ ՈՒ Խ Ե.

### ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

Յօդ. 1.— Մշուժ տալ հայ ժողովուրդի զարգացման և անոր ինքնատիպ մշակոյթին, դպրոցներու, համալսարաններու, լսարաններու, հանրային ձրի դաստիարակութիւններու և գրադարաններու հաստատումով :

Յօդ. 2.— Հաստատել երկսեռ վարժապետանոցներ :

Յօդ. 3.— Պաշտպանել և քաջալերել գեղարուեստները :


Յօդ. 4.— Փնտտել, հաւաքել և պահել հայկական ամէն կարգի հնութիւնները :

Յօդ. 5.— Քաջալերել գիտական խուզարկութիւնները :

Յօդ. 6.— Փութացնել երկրագործական ու արհեստական վարժարաններու և գործնական վարժոցներու հաստատութիւնը :

### ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ ծրագիրը վերաքննելի է կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական ժողովին կողմէ՝ հիմնական կանոնագրի արամագրութեանց համաձայն :







115

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0321309